ԴՎԻՆԻ ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ (IX—XIV ԴԴ.)

ՀՌԻՓՍԻՄԵ ՋԱՆԹՈՂԱԴՅԱՆ (Լենինգրադ)

Միջնադարյան քաղաքի հիմնադրման և զարդացման աղդակներից են արհեստը, արհեստագործության աճը։

Հնագիտական նյութերը՝ կավից, ապակուց պատրաստված անոթները, մետաղյա իրերը, կաշվի, գործվածքեղենի և փայտե առարկաների մնացորդները հնարավորություն են տալիս դատելու այս կամ այն արհեստի առկայության մասին։ Սակայն այդ նյութերի կուտակման այժմյան վիճակը միշտ չէ, որ հնարավորություն է տալիս ավելի հեռու գնացող եզրակացություններ անելու, սպառիչ վեր հանելու դրանց զարգացման ընթացքն ու ոլորտը, աշխատանքի կազմակերպման հետ կապված բազմաթիվ այլ հարցեր։

Կցկտուր են նաև գրավոր տեղեկությունները։ Արհեստների և արհեստավորների մասին տեղեկությունների հանդիպում ենք միջնադարյան մատենադիրների երկերում, վիմագիր արձանագրություններում, սակայն, ի միջի այլոց։ Այս կամ այն դեպքի կապակցությամբ գրավոր աղբյուրներում սովորաբար հիշատակվում են տվյալ անհատի մասնագիտությունը կամ սոցիալական վիճակը։ Հետևաբար, այդ տեղեկությունները կարող են միայն լրացուցիչ նյութ հանդիսանալ արհեստի, արհեստագործության պատմության ուսումնասիրության համար։

Միակ պաշտոնական վավերագիրը, որը բացահայտում է արհեստի և արհեստագործության իրավական վիճակը միջնադարյան Հայաստանում, Մխիթար Դոշի Դատաստանագիրքն է։ Նրա աշխարհիկ օրենքների «Յաղագս դատաստանաց թագաւորաց եւ որք ընդ ձեռամբն նոցա» վերտառությունն ունեցող առաջին հոդվածի վերջում ասված է. «Հարկաւորք եւ աւգտակարք յարուեստս հողագործութիւն է, եւ դարբնութիւն, եւ հիւսնութիւն. եւ բազմաց է հողագործել։ Առաւել պատուիցի երկաթագործ եւ փայտագործ։ Իսկ աւգնական բնութեանս մարմնոյ եւ յարկաւոր յարուեստ է բանական բժշկութիւն...»[1]։ Այսպիսով, թեև «Դատաստանագրքում» արհեստների մեջ նախապատվությունը տրվում էր դարբնությանն ու հյուսնությանը, այդուհանդերձ չեն անտեսվում և մյուս արհեստները։

Արհեստագործությունը ոչ միայն շահավետ, այլև պատվավոր գործ էր համարվում։ Արհեստավորը հասարակության արժանի և մեծարվող անդամն էր։ Այս իրողությունն արտացոլվել է նաև հայկական ժողովրդական առածներում («Փեշակը (արհեստը) օր կա օսկե բիլազուկ է», «Արվեստը կաթ-կաթ աղբյուր ա, որ վրարի ոչ, պկասիլ էլ չի», «Արհեստ ունեցողը հարի (մինչև) կեսօրին անոթի կը մնա, չունեցողը՝ հարի իրիկուն»)[2]։

---

1 Մ խ ի թ ա ր Դ ո շ, Գիրք դատաստանի, Երևան, 1975, էջ 32։

2 Ա. Ղ ա ն ա լ ա ն յ ա ն, Հայկական առածանի, Երևան, 1951, էջ 245։

Մեր նպատակն է անդրադառնալ հայկական միջնադարյան առևտրաարհեստագործական խոշոր կենտրոններից մեկի՝ Դվին քաղաքի, արհեստներին, արհեստագործական կազմակերպության խնդրին։

Դվին քաղաքը տակավին V դ. ոչ միայն Հայաստանի խոշոր առևտրական կենտրոններից էր և Արևելքի ու Արևմուտքի միջև տարանցիկ առևտրի կենտրոն, այլև հայտնի էր իր արհեստագործական արտադրանքով[3]։ Դվինի բազմամարդ շուկայում չինական, պարսկական, բյուզանդական և հեռավոր այլ երկրներից բերված ապրանքների շարքում իրենց պատվավոր տեղն էին գրավում տեղական ծագում ունեցող շատ ապրանքներ։ Միջազգային տարանցիկ առևտրի զարգացմանը զուգընթաց զարգացում էր ապրում և տեղական արհեստագործությունը, որն իր բարձր աստիճանին է հասնում XI—XIV դդ.։

Միջնադարյան քաղաքներում, որպես կանոն, ապրում և աշխատում էին երկու կարգի արհեստավորներ։ Առաջինը, և ակներևաբար մեծաթիվը, այն արհեստավորներն էին, որոնք աշխատում էին ներքին շուկայի պահանջները բավարարելու համար։ Երկրորդ կարգի արհեստավորների խմբին էին պատկանում բարձր որակավորում ունեցող վարպետները, որոնց արտադրանքը դուրս էր բերվում նաև արտաքին շուկա[4]։ Հետաքրքրական է, որ եթե առաջին խմբի արհեստավորների արտադրանքի հետ ծանոթանալու աղբյուրը պեղումների ժամանակ հայտնաբերված հնագիտական նյութն է, ապա երկրորդ խմբի վերաբերյալ հիմնական տեղեկությունները հաղորդում են գրավոր աղբյուրները։

Միջնադարում կարևոր արհեստներից էր մետաղամշակությունը։ Հայաստանի ընդերքը հարուստ է բազմատեսակ մետաղի հանքերով (երկաթ, պղինձ, ոսկի, արծաթ և այլն), ուստի բնական է, որ մետաղամշակման արհեստը գոյություն ուներ հնագույն ժամանակներից։

Մետաղագործ վարպետները պատրաստում էին աշխատանքային գործիքներ, ինչպես քաղաքի, այնպես էլ գյուղի համար։ Մետաղից էին պատրաստում զենքն ու զրահը, բազմատեսակ կենցաղային իրերն ու առարկաները, կանացի զարդերը, եկեղեցական սպասքը։ Նույն դարբին արհեստավորի ձեռքով և միևնույն արհեստանոցում էր պատրաստվում մետաղյա իրերի մեծագույն մասը։ Դարբնոցում էին կռում, կոփում երկաթն ու պղինձը, այնտեղ էին մշակում թե՛ աշխատանքային գործիքները, թե՛ զենքերը։ Այս տիպի ունիվերսալ արհեստավորներն աշխատում էին ինչպես քաղաքում, այնպես էլ գյուղում։

Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում (IX—XIV դդ.) այս արհեստն ապրում էր զարգացման նոր փուլ։ Արդեն IX դ. մետաղամշակությունն ավելի քաղաքային արհեստի բնույթ էր կրում։ Գյուղական և թափառաշրջիկ բազմաշնորհ դարբինները երկրորդական դեր էին խաղում և հիմնականում զբաղված էին գործածության մեջ եղած իրերը նորոգելով։ Նույն այս ժամանակ

---

3 Բաբկեն Առաքելյան, Քաղաքները և արհեստները Հայաստանում IX—XIII դդ., հ. 1, Երևան, 1958, էջ 71—75, Կ. Գ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, Երևան, 1952։

4 Х. А. Мушегян, Денежное обращение Двина по нумизматическим данным, Ереван, 1962.

տեղի է ունենում նաև աշխատանքի բաժանում և մասնագիտական ճյուղավորում՝ արհեստի ներսում։ Դարբինն իր դարբնոցում կռում էր միայն երկաթից պատրաստվող իրեր։ Պղնձից առարկաներ և գործիքներ էին պատրաստվում արդեն պղնձագործի արհեստանոցում։ Հանդես են գալիս արհեստագործության բազմաթիվ այլ մասնաճյուղեր՝ զինագործ, պայտագործ, փականագործ և ուրիշներ։ Այդ երևույթի առավել խորացումը քաղաքային կյանքում՝ ցույց են տալիս Դվինի և Անիի պեղումներից հայտնաբերված մետաղյա իրերի բազմաթիվ նմուշները, որոնք պատրաստված են մասնագիտական մեծ հմտությամբ[5]։

Պեղումների ժամանակ Դվինում բացվել են դարբնի երկու արհեստանոցներ. մեկը՝ 1938 թ. քաղաքի կենտրոնական թաղամասում, նախկին քաղաքային հրապարակում, որը 893 թ. երկրաշարժից հետո այլևս չի վերականգնվել և վեր է ածվել արհեստավորական թաղամասի։ Հետաքրքրական է դարբնոցի տեղը։ Այն տեղավորված է քաղաքից միջնաբերդ տանող շարժական կամրջի մոտ՝ քաղաքային ճանապարհների բանուկ հատվածներից մեկում։ Դարբնոցի հատակը սալահատակված էր թրծված աղյուսով և կենտրոնում ուներ քառակուսի հարթակ (3,5×3,5 մ), հատակի վրա կար 0,50 մ խորությամբ մի փոս, որտեղ, ակներևաբար, տեղավորված է եղել դարբնի զնդանը։ Կառույցի անկյունում կուտակված էր երկաթե առարկաների մեծ կույտ՝ կացին, բահ, դամեր, ձիու պայտեր և այլն[6]։ Այս դարբնոցը թվագրվում է XI—XII դդ.։ Երկրորդ՝ ավելի փոքր դարբնոցը բացվել է 1949 թ.՝ ստորին բերդում։

Դվինը միաժամանակ միջնադարյան Հայաստանի զինագործական կարևոր կենտրոններից էր և հայտնի էր իր զինանոցներով, որտեղ իրենց զորքերն էին զինում հայ զորավարները։ Այսպես, համաձայն VIII դ. պատմիչ Ղևոնդ Երեցի, Արտավազդ Մամիկոնյանն արաբական հարկահավաքների վրա հարձակումից առաջ Դվինի զինանոցներում է զինել իր զորքը[7]։ Պատմիչի այս վկայությունը հաստատվում է Դվինի պեղումներից հայտնաբերված ավելի ուշ շրջանի (IX—XIII դդ.) զենքերի բազմաթիվ տեսակների (տարբեր ձևի և չափերի նետասլաքներ, տեգեր, մարտական դանակներ, դաշույններ, սուսերներ, սակրեր, զրահների մնացորդներ և այլն) առկայությամբ[8]։

Զինատեսակների այս բազմազանությունը, որոնց մեծագույն մասը, անկասկած, Դվինի զինագործների ձեռքով է պատրաստվել, հնարավորություն է ընձեռում հանգելու ևս մի կարևոր եզրակացության. բարձր վարպետությամբ պատրաստված այս բազմապիսի ու բազմատեսակ զենքն ու զրահը հնարավոր չէ կռել միևնույն արհեստանոցում։ Կասկածից վեր է, որ ամեն մի զինագործական արհեստանոց ուներ իր նեղ մասնագիտացումը և պատրաստում էր զենքի որոշակի տեսակ[9]։ Աշխատանքի բաժանման կազմակերպման այս հանգամանքի դեպքում, ինչ խոսք, հնարավոր էր նաև Դվինի զինանոցի գոյությունը, որի մասին հաղորդում է պատմիչը։

---

5 Բ ա բ կ է ն Ա ռ ա ք ե լ յ ա ն, նշվ. աշխ., էջ 133, 152։

6 Կ. Գ. Ղ ա ֆ ա դ ա ր յ ա ն, նշվ. աշխ., էջ 48։

7 Ղ և ո ն դ վ ա ր դ ա պ ե տ, Պատմութիւն, Ս. Պետերբուրգ, 1887, էջ 138։

8 Կ. Գ. Ղ ա ֆ ա դ ա ր յ ա ն, նշվ. աշխ., էջ 160։

9 Բ ա բ կ է ն Ա ռ ա ք ե լ յ ա ն, նշվ. աշխ., էջ 142—152։

Շատ հետաքրքրական նյութ են տալիս նաև Անիի և նրա շրջակայքի վիմական արձանագրությունները։ Դրանցից տեղեկանում ենք, որ Անիում մետաղագործական, ինչպես նաև այլ կենսական նշանակություն ունեցող արհեստներն արդեն XII—XIII դդ. ունեցել են ոչ միայն աշխատանքի ներքին բաժանում, այլև իրենց արհեստագործական միավորումները՝ կազմակերպությունները։ Պատահական չէ, որ, ըստ վիմագիր հիշատակարանների, Անիում գոյություն ունեին նալբանդների (պայտագործների) թաղամաս, դարբինների փողոց[10]։

Մետաղամշակման արհեստի կարևոր ճյուղերից էր ոսկերչությունը, որը նույնպես իր պատմական խոր արմատներն ունի Հայաստանում։ Դվինի նման մեծ և հարուստ քաղաքներում, որտեղ ապրում էին մեծահարուստ քաղաքացիներ՝ առևտրականներ, պաշտոնյաներ, բնական է, որ զարգանում և բարգավաճում էր նաև պերճանքի առարկաներ կերտելու արհեստը։

Դվինում հայտնաբերվել են ոսկուց պատրաստված բազմազան իրեր՝ մատանիներ, մանյակներ, ապարանջաններ և այլն, որոնք ցույց են տալիս ոսկերչության զարգացման բարձր աստիճանը[11]։ Ոսկուց պատրաստված իրերի համեմատությամբ արծաթե զարդերը շատ ավելի փոքրաթիվ են։ Այս հանգամանքը մասնագետները բացատրում են արծաթի այն ճգնաժամով, որ ապրում էր Մերձավոր արևելքը XI—XIII դդ.[12]։ Եվ քանի որ ոսկին թանկ էր, իսկ արծաթ չկար, մեծ տարածում են գտնում բրոնզից պատրաստված զարդերը, որոնք հմուտ ձեռքում թանկարժեք քարերի համակարգում ձեռք էին բերում անհրաժեշտ գեղեցկություն[13]։

Դվինում պեղված ոսկերչի երկու արհեստանոցներում հայտնաբերվել են նաև ոսկերչության համար անհրաժեշտ աշխատանքային գործիքներ ու հարմարանքներ։ Արհեստանոցները գտնվում են միջնաբերդում՝ բնակելի շենքի համակարգում, որը շատ բնորոշ է այդ նույն արհեստի բնույթին[14]։ Որպես կանոն, ոսկերչի արհեստանոցը և վաճառատուն-կրպակը կից էր լինում արհեստավորի բնակարանին։

Դվին քաղաքում նշանակալից զարգացման էր հասել ապակեգործությունը, որը, անշուշտ, պայմանավորված էր մետաղամշակության և մի շարք այլ արհեստների զարգացման աստիճանով։ Քաղաքի տարածքի բազմամյա պեղումների հետևանքով այժմ ունենք միջնադարյան ապակե իրերի հազվադեպ մի ժողովածու, որ հնարավորություն է ընձեռում ուսումնասիրել Դվինի ապակեգործության զարգացումը մի քանի դարերի ընթացքում։

Ժողովածուն բաղկացած է ապակե իրերի բազմաթիվ և բազմատեսակ նմուշներից (բաժակներ, թասեր, սրվակներ, բազմատեսակ ձևերի սափոր-

---

10 Р. М. Джанполадян, Организация ремесла в Ани X—XIII вв. (тезисы к докладу), («Бартольдовские чтения», М., 1976, с. 42—43).

11 Վ. Աբրահամյան, Արհեստները և համքարական կազմակերպությունները Հայաստանում IX—XIII դդ., Երևան, 1946, էջ 90—139։

12 Х. А. Мушегян, նշվ. աշխ., էջ 96։ Կ. Գ. Ղաֆադարյան, նշվ. աշխ., էջ 172։

13 Н. Г. Акопян, Художественный металл средневековой Армении IX—XIII вв. (автореферат канд. диссертации, Ереван, 1977).

14 Կ. Գ. Ղաֆադարյան, նշվ. աշխ., էջ 170։

ներ և տարբեր նշանակության անոթներ, զամպարներ, լուսամուտի ապակի, կանացի զարդեր՝ ուլունքներ, ապարանջաններ, կախիկներ և այլն)։

Ապակու ֆիզիկաքիմիական հատկությունները հնարավորություն են տալիս նյութի մշակման մի շարք եղանակների օգտագործումը։ Բարձր ջերմաստիճանի տակ այն կարելի է ձուլել, մամլել, փչելու եղանակով ձևավորել, դրոշմել։ Ավելի ցածր ջերմաստիճանում ապակին դառնում է ծորուն և հնարավոր է դառնում այն ձգել, ստանալ ստվար ու բարակ թելեր։ Սառը վիճակում ապակին կարելի է կտրել, հղկել, ողորկել։ Դվինի ապակեգործ վարպետներին հայտնի էին ապակու մշակման բազմաթիվ հնարներ։

Դվինի ապակեղենի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս պարզել այդ արհեստի զարգացման պատկերն ու աստիճանը, բացահայտել ապակեգործության զարգացման որոշակի փուլերը, ինչպես նաև տարբեր իրերի ժամանակագրական սահմանները։

Դվինի ապակու հարուստ հավաքածուի ուսումնասիրությունը բերում է այն հետևության, որ Դվինում արդեն IX դ. ապակեգործությունը նշանակալից արհեստներից էր և աչքի էր ընկնում արտադրանքի բարձր որակով։ Ապակեգործ վարպետները, պահպանելով իրենց նախորդների ավանդույթները և աշխատանքի եղանակները, ընդօրինակելով նրանց հինավուրց վարպետությունը, ժամանակի ընթացքում զգալիորեն զարգացնում են պատրաստման միջոցները, այն դարձնում ավելի ժամանակակից, բազմատեսակ։ Այս ժամանակաշրջանի ապակեգործության զարգացումը միանգամայն օրինաչափ էր և պայմանավորված էր արհեստագործության ընդհանուր զարգացման ընթացքով։ Եթե IX դ. ապակեգործության մեջ արդեն զգացվում էին տեխնիկական նոր հնարքների սաղմեր, ապա XI—XII դդ. Դվինի ապակեգործությունը զարգանալով, իր վերելքի բարձրակետին է հասնում XIII դ.[15]։

Չնայած այն հանգամանքին, որ Դվինում և նրա շրջակայքում դեռևս չի հաջողվել հայտնաբերել ապակեգործական մեծ արհեստանոցներ, այդուհանդերձ, կարող ենք նյութի ոճական և քիմիական ուսումնասիրության հիման վրա հավաստել, որ այնտեղ IX—XIII դդ. գոյություն են ունեցել ոչ միայն բարձրորակ ապակուց բազմապիսի չափերի ապակե իրեր արտադրող ապակեգործական արհեստանոցներ, այլև հնարավորություն ունենք պնդել, որ Դվինում միևնույն ժամանակ գործում էին մի քանի արհեստանոցներ, որոնցից յուրաքանչյուրն ուներ իր ինքնատիպ գծերը, ոճային և տեխնոլոգիական յուրօրինակ առանձնահատկությունները։

Դվինի ապակեգործության համակողմանի ուսումնասիրության նպատակով սպեկտրալ և քիմիական անալիզի են ենթարկվել ապակու 120 նմուշ։ Անալիզները հիմնականում կատարել են ՍՍՀՄ ԳԱ հնագիտության ինստիտուտի քիմիական լաբորատորիայում՝ Յու. Շչապովան և Վ. Դալիբինը։ Անալիզների շնորհիվ բացահայտվել են Դվինի ապակու մի քանի յուրահատկությունները։ Պարզվում է, որ հետազոտված ապակիների հիմնական մասը պատրաստված է բնական և բուսական սոդայի կիրառումով, գրեթե բոլոր ապակիները պարունակում են տոկոսային հարաբերությամբ ալյումին։

---

15 Հ. Մ. Ջանփոլադյան, Դվինի միջնադարյան ապակին IX—XIII դդ., Երևան, 1974։

Ապակե իրերը ժամանակագրական ենթաբաժանման կարելի է ենթարկել նաև ըստ դրանց քիմիական բաղադրության մանրամասների։ Այսպես, IX—X դդ. ապակիները պարունակում են մանգան, որը հիմնականում օգտագործվում է ապակու գունաթափման համար։ XII—XIII դդ. ապակիները մանգան չեն պարունակում։ Պարզվում է, որ ապակու հումքի բազան նրա գոյության ամբողջ շրջանում ունեցել է միևնույն աղբյուրը։

Անիում՝ և Դվինում տարածված ու զարգացած արհեստներից էր բրուտագործությունը։ Թե՛ գյուղում, թե՛ քաղաքում կավե ամանեղենն օգտագործում էին բնակչության բոլոր խավերը։ Կավից էին պատրաստվում նաև կղմինդրըներն ու ջրատար խողովակները։

Դվինի և Անիի պեղումներով հայտնաբերված կավե իրերի մեծ և բազմատեսակ ժողովածուները ցույց են տալիս ոչ միայն բրուտագործական արհեստի զարգացման աստիճանը, այլև նրա զարգացման ընթացքը[16]։ Կավից պատրաստված և մարդու կենցաղում օգտագործվող ամանեղենից ամենից ավելի զանգվածային է հասարակ, անջնարակ խեցեղենը։ Իրերի այդ խմբին, այսպես կոչված խոհանոցային սպասքի թվին են պատկանում ոչ միայն անմիջապես խոհանոցում օգտագործվող ամանեղենը, այլև մեծ ու փոքր կարասները, թոնրի խփերը։ Բրուտագործ վարպետը, որը, անկասկած, շատ սիրում, գնահատում էր իր արհեստը, իր կարողությունների չափով հասարակ, պարզ ամանեղենը զարդարում էր վերադիր կամ փորագիր զարդերով, դաջազարդումով և այն դարձնում գեղեցիկ։ Հատկապես աչքի է ընկնում Դվինի ու Անիի պեղումներից հայտնաբերված ջնարակված խեցեղենը, որի պատրաստման համար օգտագործվել են այդ արհեստի բազմապիսի հնարքները՝ գեղեցիկ և զարդարուն իրեր կերտելու համար։

Դվինում պեղվել են բրուտագործական մի քանի արհեստանոցներ. ամենահինը պեղվել է 1968-ին՝ քաղաքի հարավ-արևելյան արվարձանում[17]։ Պեղումները ցույց տվեցին, որ այս բրուտանոցը տևական կյանք է ունեցել։ Այն, հավանաբար, հիմնադրվել է IX դ. կեսերին և գործել է ոչ միայն X, այլև XI—XIII դդ.։

Ինչպես ցույց է տալիս նյութի ուսումնասիրությունը, շատ հնարավոր է, որ այստեղ միաժամանակ գոյություն են ունեցել մի քանի արհեստանոցներ, որոնք ունեցել են իր ժամանակին համապատասխան տեխնիկական սարքավորում, արհեստանոցներն ապահովված են եղել ջրամուղ և ջրատար համակարգով։ Պեղված իրերը հնարավորություն են տալիս ներկայացնել արհեստանոցների աշխատանքային ամբողջ ընթացքը։ Այս արհեստանոցներում խեցեղեն իրեր և առարկաներ էին պատրաստում երկու տարբեր որակի կավից։ Մանրահատիկ կավից պատրաստում էին բարձր որակի նուրբ խեցի ունեցող անոթներ, որոնք, որպես կանոն, ծածկվում էին նաև անգոբով և գունավոր ջնարակով։ Խոշորահատիկ կավից պատրաստում էին հասարակ ամանեղեն, կարասներ և այլն։

---

16 Կ. Գ. Ղաֆադարյան, նշվ. աշխ., էջ 182—236, Բաբկեն Առաքելյան, նշվ. աշխ., էջ 211—264։

17 А. А. Калантарян, К вопросу о способах изготовления керамики в средневековой Армении («Археологические памятники феодальной Грузии», т. II, Тбилиси, 1974, с. 280—290).

Արհեստանոցներին կից եղել է թրծման հրակայուն հնոցների մի ամբողջ համակարգ՝ մեծ ու փոքր ամանեղենի թրծման համար։ Հնոցները երկաստիճան էին, կլոր հիմքով և թաղակապ ծածկով։ Դվինի արհեստանոցների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ արդեն IX դ. բրուտագործության մեջ գոյություն ուներ աշխատանքի մասնագիտական բաժանում։ Արհեստանոցները պատրաստում էին տարբեր որակի և տեսակի ամանեղեն։ Յուրաքանչյուր արհեստանոց ուներ իրեն հատուկ իրերի պատրաստման յուրահատկությունները՝ ձևը, որակը, զարդանկարի ոճը, իր նեղ մասնագիտական ճյուղավորումը։ Մի արհեստանոցում պատրաստում էին ջնարակված նուրբ ամանեղեն, մեկ ուրիշում՝ կարասներ և սափորներ, մի այլի մասնագիտական ճյուղը տանիքի կղմինդր և ջրատար խողովակներ պատրաստելն էր։ Բոլոր վարպետները, անկախ պատրաստվող իրի տեսակից, հայտնի էին բրուտ անունով և ունեին իրենց հատուկ թաղամասը։

Սակայն բարձր որակի, հմտորեն պատրաստված իրերի կողքին և դրանց զուգահեռ թե՛ Դվինում, թե՛ Անիում ամենուրեք հանդիպում են նաև հասարակ տնայնագործական միջոցներով պատրաստված ամանեղեն, խոհանոցի սպասք և այլն։ Վերջիններս պետք է, որ ավելի մատչելի լինեին, քանի որ պատրաստվում էին տներին կից փոքր արհեստանոցներում։ Այսպիսի մի արհեստանոց է պեղվել 1976 թ.՝ քաղաքի ստորին բերդի լանջի արհեստավորական թաղամասի շենքերից մեկում. այն թվագրվում է XII—XIII դդ.[18]։

XII դ. Դվինում լայն տարածում ուներ հախճապակե բարձրորակ անոթների արտադրությունը[19]։

Միանգամայն բնական է, որ վաճառաշահ և բազմամարդ քաղաքներում աճում ու զարգանում էին նաև արհեստագործության բազմաթիվ այլ ճյուղեր, որոնք միշտ չէ, որ ներկայացվում են հնագիտական ժողովածուներում։ Այդպիսի նյութերից են գործվածքները, կաշվից և փայտից պատրաստված առարկաները, որոնք հողում վատ են պահպանվում։ Նման դեպքում հաճախ օգնության են գալիս գրավոր աղբյուրները։ Այսպես, օրինակ, այդ աղբյուրներից ենք տեղեկություններ ստանում մանածագործության մասին։

Միջին դարերում ամենատարածված արհեստներից էր գործվածքներ արտադրող արհեստը։ Այն նույնպես ունեցել է տնայնագործական բնույթ, սակայն, ի տարբերություն այլ արհեստների, իր տնայնագործական բնույթը պահպանել է շատ ավելի երկար ժամանակ։ Չնայած այդ հանգամանքին, մանածագործության մեջ բավական վաղ է տեղի ունեցել աշխատանքի ներքին բաժանում։ Տակավին վաղ միջնադարյան գրավոր աղբյուրները հիշատակում են այս արհեստի մի քանի ճյուղերի մասին։ Ինքնուրույն ճյուղ էին կտավագործությունը, գորգագործությունը, մետաքսագործությունը, ջուլհակությունը, ժանյակագործությունը և այլն։ Շատ դեպքերում արհեստագործության նեղ ճյուղը պայմանավորված էր հումքի և գործվածքի տեսակից։

Մանածագործությունը հավասար չափով գոյություն ուներ թե՛ գյուղում, թե՛ քաղաքում։ Գյուղում աշխատող մանածագործը, որպես կանոն, բավա-

---

18 Ֆ. Ս. Բաբայան, Խեցեղենի թրծման հնոց Դվինից («Պատմա-բանասիրական հանդես», 1979, № 1, էջ 276—280)։

19 Բաբկեն Առաքելյան, նշվ. աշխ., էջ 265—289։

բարում էր հիմնականում իր ընտանիքի և հարևանների պահանջները ու հազվագյուտ դեպքում էր դուրս գալիս շուկա, ընդ որում, միայն ներքին շուկա։ Արհեստավորը քաղաքում հիմնականում աշխատում էր շուկայի համար։

Համաձայն գրավոր աղբյուրների տվյալների, հայկական քաղաքներում և հատկապես Դվինում արտադրված գործվածքները հանրահայտ էին միջազգային շուկայում։ Այս մասին բազմիցս հիշատակում են X դ. արաբ ճանապարհորդ տարեգիրները։ Հռչակված էին Դվինի ծիրանին, մետաքսե ծաղկազարդ գործվածքներն ու ժանյակները, հատուկ տեսակի ծածկոցները, աղվամազից և բրդից գործված գորգերը[20], որոնք և Դվինի միջազգային առևտրի հիմնական տարրերից են։ Սակայն չնայած այդ հանգամանքին, այս արհեստին վերաբերող հնագիտական նյութերը շատ սակավ են. մեզ են հասել բրդյա գորգի և դիպակի փոքր պատառիկներ, ինչպես նաև շատ քիչ թվով ջուլհակի գործիքներ[21]։

1939 թ. Դվինի ստորին բերդի հարավային լանջին՝ շուկայի հրապարակի արևելյան մասում, բացվել են երկհարկանի շենքի մնացորդներ։ Շենքի վերին մասը բաղկացած է եղել մի քանի սենյակներից. մեկն ունեցել է զարդարուն խորշ, իսկ մյուս սենյակները՝ գունազարդ սալիկներով նախշեր։ Ներքնահարկում տեղավորված են եղել գինու մեծ կարասներ։ Այն սենյակը, որտեղ գտնվում էր դիպսե հարդարանք ունեցող խորշը, ուներ ևս մի հետաքրքրական մանրամաս՝ հատակն օժտված էր երկու զուգահեռ ակոսներով, որոնք երեսապատված էին տուֆ քարով[22]։ Այս ամենը հիշեցնում է ջուլհակի դազգահի տեղավորման հարմարանքները և գրականության մեջ այդպես էլ կոչվում է՝ «ջուլհակի բնակարան»[23]։

Այնպիսի մեծ վաճառաշահ քաղաքում ինչպիսին էր Դվինը, բնական է, որ ապրում և գործում էին բազմաթիվ այլ մասնագիտության արհեստավորներ՝ շինարարներ, կաշեգործներ, գրիչներ, գրքեր նկարազարդող մասնագետներ և շատ ուրիշներ, որոնց ստեղծագործությունները մեզ չեն հասել։

XIV դ. ձեռագրերից մեկի հիշատակարանում թվարկված են քաղաքային մի խումբ արհեստավորներ։ Այդ ցանկում հիշատակված են դարբինը, ասպրագործը (վահանագործ), դանակագործը, խառատը, դերձակը, ջուլհակը, կոշկակարը, կաշեգործը, հյուսնը, կտավագործը, մազմանողը, ներկարարը, ոսկերիչը, սանրագործը, քարագործը, ինչպես նաև խոհարարը, գինեգործը, մանածագործը և այլն[24]։ Բ. Առաքելյանը նույն ժամանակի հայկական քաղաքներում հաշվում է 97 արհեստագործական մասնագիտություն։

Այսպիսով, ըստ մատենագրական նյութերի և գտածոների, IX—XIV դդ. Դվինում արհեստագործությունն ունեցել է ոչ միայն լայն տարածում, այլև նետել է խոր արմատներ և գտնվել ժամանակի մասնագիտական մակարդակի վրա։ Յուրաքանչյուր արհեստ ունեցել է իր նեղ մասնագիտական ճյուղավորումները, նաև հասարակական կազմակերպությունները, միավորումները[25]։

---

20 Կ. Գ. Ղաֆադարյան, նշվ. աշխ., էջ 180։

21 Նույն տեղում, էջ 138—140։

22 Նույն տեղում։

23 «ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», կազմեց Լ. Խաչիկյան, Երևան, 1950, էջ 666։

24 Բարկեն Առաքելյան, նշվ. աշխ., էջ 341—345։

25 Նույն տեղում, էջ 352։

Բ. Առաքելյանը գտնում է, որ Դվինում, որտեղ քաղաքային կյանքը զարգացման բարձր աստիճանի էր մինչև արաբական նվաճումները, այդ տիպի միավորումները կարող էին կազմավորվել դեռևս IX դ. այն դեպքում, երբ հայկական մյուս քաղաքներում՝ Կարսում, Անիում դրանք հանդես են եկել միայն XI դ.։ Դվինի արհեստավորական կազմակերպությունների, միավորումների գոյությունը հավաստող ուղղակի փաստեր մեզ չեն հասել, սակայն դրանք առկա էին Անիի արհեստավորական կազմակերպություններում, որը և կարող է ընդհանուր հետևությունների հիմք հանդիսանալ։

Այս միավորումները, ակներևաբար, իրենց հիմքում ունեին նաև ներքին կարգուկանոններ սահմանող ավանդական կանոնադրություն։

О РЕМЕСЛАХ В ДВИНЕ (IX—XIV вв.)

РИПСИМЕ ДЖАНПОЛАДЯН (Ленинград)

Резюме

Из общего обзора состояния ремесла и ремесленных организаций в средневековом городе Двине следует, что в Двине IX—XIV вв. имелись ремесленники различных специальностей, которые изготовляли товары не только для внутреннего рынка, но и для вывоза за пределы страны. Ремесленная продукция этих мастеров находилась на высоком уровне своего времени. Много косвенных данных свидетельствует о том, что в Двине существовало разделение труда внутри ремесла и ремесленных организаций.